ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Հորավար Անդրանիկի 8 Ա
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi@alaverdi.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 31 » հունվարի 2012 թվականի N 1 - Ն

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԹԻՎ 49-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ 2012Թ. ԲՅՈՒՋԵԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ և 63-րդ հոդվածներով, հիմք ընդունելով, այն հանգամանքը, որ կատարվել է Ալավերդի համայնքի 2012թ. բյուջեին պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի ճշտում և 2012թ. հունվարի 1-ի դրությամբ համայնքի բյուջեի փաստացի մնացորդը կազմել է 16905.0 հազ. դրամ, այդ թվում վարչական բյուջեի փաստացի մնացորդ՝ 11435.2 հազ. դրամ, ֆոնդային բյուջեի փաստացի մնացորդ՝ 5469.8 հազ. դրամ և ելնելով այն հանգամանքից, որ 2012թ. հունվարի 1-ի դրությամբ բյուջեի եկամտային մասը գերազանցում է բյուջեի ծախսային մասին տարեվերջի մնացորդի չափով՝ 16905.0 հազ. դրամով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ալավերդի համայնքի 2012թ. բյուջեի եկամտային ու ծախսային մասերում կատարել փոփոխություններ ըստ ներկայացվող ուղղությունների.

1. Կատարել դոտացիայի ճշտում և Ալավերդի համայնքի 2012թ. բյուջեին պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան պակասեցնել 27.1 հազ. դրամով և նախատեսել դոտացիա 201754.6 հազ. դրամ.
2. 2012թ. բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի գծով կատարել փոփոխություն, այդ թվում՝ հողի իրացումից մուտքերը պակասեցնել 4382.0 հազ. դրամով.
3. 2012թ. բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը՝ 11435.2 հազ. դրամ ուղղել բյուջեի ֆոնդային մաս.
4. Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներն ավելացնել 9500.0 հազ. դրամով.
5. 2012թ. բյուջեի օրենսդիր և գործադիր մարմինների համար նախատեսված ապահովագրական ծախսերն ավելացնել 40.0 հազ. դրամով (բաժին 01, խումբ 1, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262161038, հոդված 4215).
6. 2012թ. բյուջեի բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառում նախատեսել շինությունների կառուցման ծախս 2000.0 հազ. դրամ (բաժին 06, խումբ 6, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262121222, հոդված 5112), կապիտալ վերանորոգման ծախս 3700.0 հազ. դրամ (բաժին 06, խումբ 6, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262121222, հոդված 5113) և բնակարանային շինարարության ու

կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների համար ծախս 500.0 հազ. դրամ (բաժին 06, խումբ 5, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262121339, հոդված 5134).

7. 2012թ. բյուջեի մշակույթի բնագավառում «Ալավերդու քաղաքային համայնքի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿԻ-ի համար նախատեսել կապիտալ վերանորոգման ծախս՝ 3093.0 հազ. դրամ (բաժին 08, խումբ 2, դաս 3, ծրագիր 51, հ/հ 900262229033, հոդված 5113), մշակույթի գծով հետազոտական և նախագծային աշխատանքների համար նախատեսել ծախս 250.0 հազ. դրամ (բաժին 08, խումբ 5, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262121388, հոդված 5134).
8. 2012թ. բյուջեի կրթության բնագավառում արտադպրոցական դաստիարակության գծով «Ալավերդու քաղաքային համայնքի ըմբշամարտի դպրոց» ՀՈԱԿԻ-ի համար նախատեսել կապիտալ վերանորոգման ծախս՝ 400.0 հազ. դրամ (բաժին 09, խումբ 5, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262121297, հոդված 5113), կրթության բնագավառում նախադպրոցական դաստիարակության գծով «Ալավերդու քաղաքային համայնքի թիվ 6 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿԻ-ի համար նախատեսել կապիտալ վերանորոգման ծախս՝ 2100.0 հազ. դրամ (բաժին 09, խումբ 1, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262121289, հոդված 5113), կրթության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքների համար նախատեսել ծախս 480.0 հազ. դրամ (բաժին 09, խումբ 7, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262121156, հոդված 5134).
9. Համայնքի 2012թ. բյուջեի պահուստային ֆոնդն ավելացնել 9432.9 հազ. դրամով (բաժին 11, խումբ 1, դաս 2, ծրագիր 51, հ/հ 900262577027, հոդված 4891):

Հիմք ընդունելով 2012թ. բյուջեի եկամտային ու ծախսային մասերում կատարվող փոփոխությունները, 2012թ. բյուջեի եկամուտների ու ծախսերի եռամսյակային բաշխման համամասնությունն ապահովելու նպատակով բյուջեի եռամսյակային բաշխման մեջ կատարել համապատասխան ճշտումներ:

Որոշումն ընդունվել է.

ԿՈՂՄ (6)		ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱՀ (0)
1. ԱԲԵԼՅԱՆ	ՄԵՐՈՒԺԱՆ		
2. ԵՐԻՑՅԱՆ	ԿԱՄՈ		
3. ԹԱՆԴԻԼՅԱՆ	ՀՐԱՉՅԱ		
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	ԱՐՄԵՆ		
5. ՃՈՒՂՈՒՐՅԱՆ	ՀԱԿՈԲ		
6. ՎԱՐՈՍՅԱՆ	ԿԱՄՈ		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկի 8 Ա
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi@alaverdi.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» հունվարի 2012 թվականի N 2 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴ- ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ համայնքի սեփականություն համարվող բնակակավայրի նշանակության հողերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել:
2. Հաստատել մեկնարկային գներ՝ համաձայն աղյուսակի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն ընդունվել է.

ԿՈՂՄ (6) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

1. ԱԲԵԼՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
2. ԵՐԻՑՅԱՆ ԿԱՄՈ
3. ԹԱՆԴԻԼՅԱՆ ՀՐԱՉՅԱ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՃՈՒՂՈՒՐՅԱՆ ՀԱԿՈԲ
6. ՎԱՐՈՍՅԱՆ ԿԱՄՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2012թ. ՀՈՒՆՎԱՐԻ 31-ի N 2-Ն ՈՐՈՇՈՒՄՈՎ

Ա Ղ Յ Ո Ւ Ս Ա Կ

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ

Լոտ	Անվանումը	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը /քմ/	Նպատակային նշանակությունը	Հողատեսք	Գործառնական նշանակությունը	Մեկնարկային գինը	Սահմանափակումներ
1	Հասարակական օբյեկտներ կառուցելու	ք. Ալավերդի, Թումանյան փողոց հյուսիսային մաս	0037-0001	240.0	Բնակավայրի բնակելի	-	Հասարակական կառուցապատման	240000.0 դրամ	չկա
2	Ավտոտնակներ կառուցելու	ք. Ալավերդի, Սանահին Սարահարթ 2/6 շենքի հարավ-արևմտյան մաս	0061-0001	570.0	Բնակավայրի բնակելի	-	Բնակելի կառուցապատման	855000.0 դրամ	չկա
3	Ավտոտնակ կառուցելու	ք. Ալավերդի, Սանահին Սարահարթ 2/10 Դ շենքի հարավային մաս	0061-0001	48.0	Բնակավայրի բնակելի	-	Բնակելի կառուցապատման	72000.0 դրամ	չկա
4	Ավտոտնակ կառուցելու	ք. Ալավերդի, Սանահին Սարահարթ 3/5 շենքի հյուսիսային մաս	0152-0001	48.0	Բնակավայրի բնակելի	-	Բնակելի կառուցապատման	72000.0 դրամ	չկա
5	Ավտոտնակ կառուցելու	ք. Ալավերդի, Սանահին Սարահարթ 1/4 շենքի հարավային մաս	0150-0001	35.4	Բնակավայրի բնակելի	-	Բնակելի կառուցապատման	53100.0 դրամ	չկա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկի 8 Ա
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi@alaverdi.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 31 » հունվարի 2012 թվականի N 3 - Ն

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30.09.2010Թ. ԹԻՎ 52-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով և ««Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ, լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ընդունված 08.12.2011թ. N ՀՕ-342-Ն) 5-րդ հոդվածի 1-ին կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ուժը կորցրած ճանաչել Ալավերդի համայնքի ավագանու 30.09.2010թ. «Առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները հաստատելու մասին» թիվ 52-Ն որոշումը:

Որոշումն ընդունվել է.

ԿՈՂՄ (6) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

1. ԱՐԵԼՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
2. ԵՐԻՑՅԱՆ ԿԱՄՈ
3. ԹԱՆԴԻԼՅԱՆ ՀՐԱՉՅԱ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՃՈՒՂՈՒՐՅԱՆ ՀԱԿՈԲ
6. ՎԱՐՈՍՅԱՆ ԿԱՄՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկի 8 Ա
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi@alaverdi.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» հունվարի 2012 թվականի N 4 - Ա

«ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 6 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 15-րդ կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Համաձայնություն տալ Անահիտ Հախվերդյանին «Ալավերդու քաղաքային համայնքի թիվ 6 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակելուն:

Որոշումն ընդունվել է.

ԿՈՂՄ (6)		ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱՀ (0)
1. ԱԲԵԼՅԱՆ	ՄԵՐՈՒԺԱՆ		
2. ԵՐԻՑՅԱՆ	ԿԱՄՈ		
3. ԹԱՆԴԻԼՅԱՆ	ՀՐԱՉՅԱ		
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	ԱՐՄԵՆ		
5. ՃՈՒՂՈՒՐՅԱՆ	ՀԱԿՈԲ		
6. ՎԱՐՈՍՅԱՆ	ԿԱՄՈ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ